



Ավանդատուի պարտավորությունների չկատարման դեպքում՝ Ավանդը կարող է անակցեպտ կարգով բռնագանձվել, որից հետո 30 օրացույցային օրում Բանկը պարտավոր է դրա մասին տեղեկացնել Ավանդատուին՝ տրամադրելով Հաշվի քաղվածք վերջինիս հաղորդակցման եղանակով:

2.13. Ավանդատուին վճարվող տոկոսները հարկվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափով:

3. ԱՎԱՆԴԱՏՈՒԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

3.1. Ավանդատուն իրավունք ունի՝

3.1.1. Բանկից պահանջել վճարելու Ավանդի դիմաց տոկոսներ Պայմանագրով սահմանված կարգով, չափով և ժամկետներում:

3.1.2. Բանկից պահանջել ապահովելու Ավանդի գաղտնիությունը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.1.3. Բանկից պահանջել վերադարձնելու Ավանդը դրա ժամկետը լրանալուց, ինչպես նաև Բանկի համաձայնության դեպքում՝ մինչև Ավանդի ժամկետի լրանալը:

4. ԱՎԱՆԴԱՏՈՒԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ

4.1. Ավանդատուն հաստատում է, որ Բանկի կողմից Ավանդատուին տրամադրման ենթակա տեղեկատվությունը, ներառյալ՝ քաղվածքներ, ծանուցումներ, այլ տեղեկություններ Ավանդատուին տրամադրելու լեզուն և կապի միջոցն է՝

հայերեն/անգլերեն \_\_\_\_\_ Էլեկտրոնային փոստի հասցեն \_\_\_\_\_

4.2. Ավանդատուն հաստատում է, որ մինչև Պայմանագրի կնքումը Բանկից ստացել է Ավանդի տեղեկատվական ամփոփագիրը:

5. ԲԱՆԿԻ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Բանկի կողմից Ավանդը վերադարձնելու կամ տոկոսները վճարելու պարտավորությունը չկատարելու կամ ուշացնելու դեպքում՝ յուրաքանչյուր ուշացած օրվա համար Բանկը վճարում է տույժ՝ չվճարված /չվերադարձված/ գումարի 0.02 % չափով:

5.2. Բանկը երաշխավորում է Ավանդի վերադարձը իր ակտիվներով:

6. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Ավանդը Բանկում փաստացի ընդունվելու օրվանից և գործում է մինչև Ավանդը Ավանդատուին ամբողջությամբ վերադարձվելը:

6.2. Այն հարցերը, որոնք չեն կարգավորվում Պայմանագրով, կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ: Կողմերի միջև ծագող վեճերը բանակցություններով չլուծվելու դեպքում՝ վեճերի քննությունը ենթակա է լուծման ՀՀ դատարանների միջոցով:

6.3. Ավանդատուն կարող է Պայմանագրից բխող բոլոր-պահանջները ներկայացնել ՀՀ ֆինանսական համակարգի հաշտարարին՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, դեպքերում ու պայմաններով: Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր Բանկը չի կնքել:

6.4. Պայմանագիրը կնքվել է երկու օրինակից, որից մեկական օրինակ տրամադրվել է յուրաքանչյուր կողմին: Պայմանագրի օրինակը կորցնելու դեպքում Ավանդատուի դիմումով Բանկը տրամադրում է Պայմանագրի պատճենը:

6.5. Պայմանագիրը Բանկի կողմից ստորագրվում է երեք աշխատակցի կողմից և կնքվում է Բանկի կլոր կնիքով:

7. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

<p>ԲԱՆԿ</p> <p>&lt;&lt;ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ&gt;&gt; ԲԲԸ</p> <p>Ներկայացուցչի ԱԱՀ _____</p> <p>Լիազորագրի ամսաթիվ, համար _____</p> <p>_____</p> <p>ներկայացուցչի ստորագրություն</p> <p>_____</p> <p>Անուն, ազգանուն, ստորագրություն</p> <p>_____</p> <p>Անուն, ազգանուն, ստորագրություն</p>	<p>ԱՎԱՆԴԱՏՈՒ</p> <p>_____</p> <p>Իր անձի անվանում</p> <p>_____</p> <p>ԻՄ ներկայացուցչի անուն ազգանուն</p> <p>_____</p> <p>Կ.Տ _____</p> <p>ստորագրություն</p>
---	---